ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԻ ԴԵՐԸ

ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԻ ԵՎ ԿԱՅՈՒՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԻ ԴԵՐԸ

ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԻ ԵՎ ԿԱՅՈՒՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ծրագիրը ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

Ծրագրի իրականացման
գործընկեր

Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության աջակցությամբ:
Բովանդակության համար պատասխանատվություն է կրում ՇԵՆ ԲՀԿ, և այն որևէ ձևով
չի արտահայտում Եվրոպական միության տեսակետները:

Կազմել է Լևոն Մովսիսյանը
ՇԵՆ ԲՀԿ խորհրդատու

ՆԱԽԱԲԱՆ

Ամբողջ աշխարհում կոոպերատիվները դարձել են աղքատության կրճատման, աշխատատեղերի ստեղծման, տնտեսական և սոցիալական զարգացման կարևոր դերակատար: Միավորելով կապիտալը և ռեսուրսները՝ կոոպերատիվը նվազեցնում է ծախսերը, բարելավում է արտադրանքի որակը և քանակը:

Կոոպերատիվները ստեղծվել են այն գաղափարախոսության հիման վրա, որ մի խումբ մարդիկ համատեղ ուժերով կարող են հասնել իրենց կողմից սահմանված նպատակներին, որոնց նրանցից ոչ ոք անհատապես չէր կարող հասնել: Անհատ ֆերմերի արտադրանքը փոքրածավալ է և հաճախ վաճառվում է ցածր գներով: Ֆերմերները միավորվելով կարող են որոշակի ուժ ներկայացնել շուկայում: Կոոպերատիվի միջոցով վաճառքը հնարավորություն է տալիս ավելի մեծ եկամուտ ստանալ՝ շրջանցելով միջնորդներին: Գյուղատնտեսական կոոպերատիվները նպաստում են, որ գյուղատնտեսական առաջադեմ տեխնոլոգիաները, տեղեկատվությունը, ֆինանսական միջոցները և իրացման շուկաները հասանելի լինեն անդամներին:

Կոոպերատիվները ստեղծում են աշխատատեղեր գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման և լրացուցիչ նոր ծառայությունների մատուցման միջոցով: Կոոպերատիվները տարատեսակ ոլորտներում աշխարհում ապահովում են 250 միլիոն աշխատատեղեր[1] և ունեն ավելի քան 1 միլիարդ անդամներ[2]:

Առաջին սպառողական կոոպերատիվը հիմնել են 1844 թվականին Անգլիայի Ռոչդեյլ քաղաքում տեքստիլ գործարանի 28 աշխատակիցներ: Նրանց կողմից բացված առաջին կոոպերատիվ մթերային խանութը մատչելի գներով սննդամթերք էր վաճառում անդամներին:

---

[1] http://www.cicopa.coop/cicopa_old/IMG/pdf/cooperatives_and_employment_a_global_report_en__web_21-10_1pag.pdf

[2] http://www.worldwatch.org/membership-co-operative-businesses-reaches-1-billion-0

Ի՞ՆՉ Է ԿՈՈՊԵՐԱՏԻՎԸ

Կոոպերատիվն ինքնավար ընկերակցությունն է այն մարդկանց, որոնք կամավոր կերպով միավորվում են համատեղ սեփականություն հանդիսացող և ժողովրդավարական ձևով վերահսկվող ձեռնարկության միջոցով իրենց ընդհանուր տնտեսական, սոցիալական և մշակութային կարիքներն ու ձգտումները բավարարելու համար:

Այլ կերպ կոոպերատիվը սահմանվում է որպես ***օգտագործողի սեփականությունը հանդիսացող***, օգտագործողի կողմից վերահսկվող բիզնես:

Ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ «Կոոպերատիվ է համարվում քաղաքացիների և իրավաբանական անձանց անդամության վրա հիմնված ու իր անդամների գույքային փայավճարների միավորման միջոցով մասնակիցների նյութական և այլ կարիքների բավարարման նպատակով ստեղծված կամավոր միավորումը»:

Ըստ Սպառողական կոոպերացիայի մասին ՀՀ օրենքի՝ «Սպառողական կոոպերատիվը 5-ից ոչ պակաս անդամների (մասնակիցների) կարիքներն ապրանքներով և ծառայություններով բավարարելու, նրանց շահերը ներկայացնելու և դրանք պաշտպանելու նպատակով կամավոր հիմունքներով ձևավորված շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձ է»:

Ըստ Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին ՀՀ օրենքի՝ «Գյուղատնտեսական կոոպերատիվը՝ ագրոպարենային համակարգում գործունեություն իրականացնող քաղաքացիների և իրավաբանական անձանց անդամության հիման վրա հիմնված ու անդամների գույքային փայավճարների կամավոր միավորման միջոցով մասնակիցների նյութական և այլ կարիքների բավարարման նպատակով ստեղծված իրավաբանական անձն է»:

Հատուկ ուշադրության են արժանի կոոպերատիվների գործունեության հիմքում դրված հետևյալ հասկացությունները.

- Օգտագործողի սեփականություն
- Օգտագործողի կողմից վերահսկողություն
- Օգտագործման հիման վրա օգուտների բաշխում
- Համատեղ սեփականություն
- Կամավոր միավորում
- Ժողովրդավարություն և ինքնավարություն
- Կոոպերատիվ բիզնես:

ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵՔՆԵՐԸ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Կոոպերատիվների ձախողման և դրանց թերի կայացման դեպքերը քիչ չեն: Այդ իսկ պատճառով հատուկ շեշտադրում պետք է կատարել կոոպերատիվի արժեքների և սկզբունքների վրա, որոնք պետք է գիտակցի յուրաքանչյուր անդամ և նպաստի դրանց կիրառմանը:

Կոոպերատիվները ամբողջ աշխարհում բնորոշվում են իրենց ***արժեքներով***.

- ***Փոխադարձ օգնություն***
  Կոոպերատիվներում մարդիկ օգնում են իրենք իրենց՝ աշխատելով միասին և փոխադարձ օգուտ ստանալով:

- ***Ինքնապատասխանատվություն***
  Կոոպերատիվում անհատները գործում են բարձր պատասխանատվությամբ և լիարժեք դեր ունեն կազմակերպության գործառույթներն իրականացնելիս:

- ***Ժողովրդավարություն***
  Կոոպերատիվը պետք է լինի այնպես, որ յուրաքանչյուր անդամ լիարժեք վերահսկողություն ունենա կազմակերպության վրա: Կոոպերատիվի կառավարումը իրականացվում է «մեկ անդամ, մեկ ձայն» սկզբունքով:

- ***Հավասարություն***
  Յուրաքանչյուր անդամ պետք է ունենա հավասար իրավունքներ և օգուտներ (կախված իր մասնակցության չափից):

- ***Անաչառություն և արդարություն***
  Կոոպերատիվի անդամները պետք է գործեն արդար և ազնիվ:

- ***Համախմբվածություն***
  Անդամները պետք է օժանդակեն միմյանց և այլ կոոպերատիվներին:

- ***Էթիկական, գաղափարական արժեքներ***
  Կոոպերատիվի անդամները պետք է առաջնորդվեն այնպիսի գաղափարական արժեքներով, ինչպիսիք են ազնվությունը, անկեղծությունը, սոցիալական պատասխանատվությունը և ուրիշների նկատմամբ հոգատարությունը:

Կոոպերատիվների սկզբունքները ուղեցույցներ են, որոնց միջոցով կոոպերատիվները գործնականում իրագործում են իրենց նպատակները:

Կոոպերատիվը գործում է ***միջազգայնորեն հռչակված*** հետևյալ ***7 սկզբունքների*** կիրառմամբ.

1. Կամավոր և բաց անդամակցություն.

Կոոպերատիվները կամավոր կազմակերպություններ են, որոնք բաց են բոլոր այն անձանց համար, ովքեր ի վիճակի են ստանալու կոոպերատիվների ծառայությունները և պատրաստակամ են պարտավորություններ վերցնելու որպես անդամ՝ առանց սեռային, սոցիալական, ռասայական, քաղաքական կամ կրոնական որևէ խտրականության:

2. Անդամների գործունեության ժողովրդավարական վերահսկողություն.

Կոոպերատիվները իրենց անդամների կողմից վերահսկվող ժողովրդավարական կազմակերպություններ են, անդամներ, ովքեր ակտիվորեն մասնակցում են կոոպերատիվների քաղաքականության մշակմանն ու որոշումների կայացմանը: Որպես ներկայացուցիչներ ընտրված տղամարդիկ և կանայք հաշվետու են կոոպերատիվի անդամների առջև:

3. Անդամների տնտեսական մասնակցություն.

Անդամները նպաստում են իրենց կոոպերատիվի ունեցվածքի նկատմամբ հավասար իրավունքների իրականացմանը և վերահսկում են այն ժողովրդավարական ձևով: Այդ ունեցվածքի առնվազն մի մասը կոոպերատիվի ընդհանուր սեփականությունն է: Անդամները սովորաբար փոքր փոխհատուցումներ են ստանում (եթե առհասարակ ստանում են) այն կապիտալից, որը մասհանված է որպես անդամության պայման: Անդամները հավելյալ միջոցներ են հատկացնում հետևյալ նպատակներով՝ կոոպերատիվի զարգացում (հնարավոր է պահուստային ֆոնդի ստեղծմամբ, որի առնվազն մի մասը կլինի անբաժանելի) անդամներին օգնելու համար՝ ըստ տվյալ անդամի և կոոպերատիվի միջև փոխգործողության համամասնության, ինչպես նաև անդամների կողմից հաստատված այլ գործունեություն ծավալելու նպատակով:

4. Ինքնավարություն և անկախություն.

Կոոպերատիվները իրենց անդամների կողմից վերահսկվող ինքնավար, ինքնօգնող կազմակերպություններ են: Այն պարագայում անգամ, երբ կոոպերատիվները նույնիսկ պայմանագրային հարաբերությունների մեջ են մտնում այլ կազմակերպությունների, այդ թվում՝ պետության հետ, կամ միջոցներ են հայթայթում արտաքին աղբյուրներից, ապա նրանք դա անում են կոոպերատիվի ինքնավարությունը և անկախությունը պահպանելու պայմանով:

5. Կրթություն, վերապատրաստում և տեղեկատվություն.

Կոոպերատիվները կրթություն և վերապատրաստում են ապահովում իրենց անդամների, ընտրված ներկայացուցիչների, ղեկավարների և աշխատողների համար, որպեսզի վերջիններս կարողանան նպաստել իրենց կոոպերատիվի զարգացմանը: Նրանք հանրությանը, մասնավորապես երիտասարդությանը և նրանց, ում կարծիքը կարևորում են, տեղեկացնում են կոոպերացիայի բնույթի և օգուտների մասին:

6. Գործակցություն կոոպերատիվների միջև.

Կոոպերատիվներն իրենց անդամներին առավել արդյունավետ կերպով են ծառայում և առհասարակ նպաստում են կոոպերատիվ շարժման հզորացմանը, եթե աշխատում են միասին՝ տեղական, ազգային, տարածաշրջանային և միջազգային կառույցների միջոցով:

7. Համայնքի մասին մտահոգվածություն.

Կոոպերատիվներն աշխատում են հանուն իրենց համայնքների կայուն զարգացման՝ համաձայն անդամների կողմից հաստատված քաղաքականության:

ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՅԼ ԲԻԶՆԵՍ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Կոոպերատիվների բնույթը հասկանալու համար անդամները հստակ պետք է տարանջատեն դրանք այլ կազմակերպություններից: Ներդրողամետ կամ բաժնետիրական կազմակերպությունները (ՍՊԸ, ԲԲԸ, ՓԲԸ և այլն) էականորեն տարբերվում են իրենց նպատակներով, գործելակերպով, գործառույթներով և այլն:

Ստորև ներկայացնում ենք կոոպերատիվների և բիզնես իրականացնող այլ կազմակերպությունների նմանությունները և տարբերությունները.

Նմանություններ	Տարբերություններ
• Երկուսն էլ բիզնես են իրականացնում • Ակնկալում են դրական տնտեսական արդյունք իրենց գործունեությունից • Երկուսի հիմնումն էլ իրականացվում է անդամների/բաժնետերերի կողմից փայաբաժնի/բաժնետոմսի ձևով ներդրում կատարելով	• Եթե կոոպերատիվը մարդակենտրոն, անդամ-օգտագործողների վրա հիմնված կառույց է, ապա բաժնետիրական ընկերությունները կապիտալակենտրոն, մաքսիմալ շահույթ հետապնդող կառույցներ են: • Բաժնետիրական ընկերության բաժնետերը պարտադիր չէ, որ լինի այդ ընկերության ապրանքների ու ծառայությունների օգտագործողը, իսկ կոոպերատիվի պարագայում՝ անդամ-օգտագործողը կոոպերատիվի կայունության հիմքն է: • Բաժնետիրական ընկերությունների համար կարևորը շահույթն է, ուստի նա ֆերմերներին վճարում է նվազագույն ցածր գին: Կոոպերատիվի պարագայում շահույթ չի ստեղծվում իր անդամների հաշվին, իհարկե որպես բիզնես կառույց պետք է ապահովվի դրական տնտեսական արդյունք, սակայն շատ փոքր շահույթի մարժայով: • Կոոպերատիվում մեկ անդամը ունի մեկ ձայնի իրավունք, իսկ բաժնետիրականում դա որոշվում է ըստ ներդրված բաժնեմասի:

Սպառողական կոոպերատիվների պարագայում շահույթը առաջնահերթ ուղղվում է պահուստային ֆոնդ, սակայն օրենքով արգելված չէ նաև այդ ավելցուկից առաջացած գումարներով ավելացնել կոոպերատիվների անդամների փայաբաժինները: Այսպիսով կոոպերատիվը դարձնելով ավելի կայուն, մրցունակ և հետաքրքիր ֆինանսական կառույցների համար:

ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻ ԲԻԶՆԵՍ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Ինքնարժեքային գին – Կոոպերատիվն իր անդամներին ծառայություններ և ապրանքներ է մատուցում ինքնարժեքային գնի սկզբունքի հիման վրա: Օրինակ՝ ներդրանքներ մատակարարելիս կոոպերատիվն իր անդամ-ֆերմերներին դրանք մատակարարում է ինքնարժեք գումարած այսպես կոչված վերադիր կամ ***«մարժա»*** սկզբունքով, որը փակում է կոոպերատիվի գործառնական ծախսերը և կարող է ապահովել նաև զուտ ***«շահույթ»***:

Վերջինս, համաձայն կանոնադրության, կարող է կիրառվել կոոպերատիվի զարգացման նպատակով:

Համամասնության սկզբունք – Ինչպես հայտնի է կոոպերատիվի յուրաքանչյուր անդամ որոշումների կայացման գործընթացում ունի մեկ ձայնի իրավունք: Սակայն բիզնեսի տեսանկյունից առաջացած ռիսկերը և գոյացած օգուտները պետք է բաշխվեն համամասնորեն՝ ըստ մասնակցության:

Ինքնաֆինանսավորման սկզբունք – Կոոպերատիվները պետք է իրենք մշակեն իրենց բիզնեսի ֆինանսավորման ռազմավարությունը: Կոոպերատիվի յուրաքանչյուր անդամ պետք է պատրաստակամ լինի տրամադրելու ֆինանսական միջոցներ, ինչպես նաև ապահովել իր ակտիվ մասնակցությունը կոոպերատիվի բնականոն, արդյունավետ գործունեության ապահովման համար:

ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԸ՝ ԸՍՏ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵՎԵՐԻ

Կոոպերատիվները, ըստ գործունեության բնույթի, տարանջատվում են մի քանի ձևերի՝ արտադրական, շուկայավարման, մատակարարման, ծառայություններ մատուցող և վերամշակող:

Այս բաժանումները, իհարկե, պայմանական են, և երբեմն բավականին դժվար է զանազանել ու տարանջատել կոոպերատիվների տարբեր ձևերը: Հատկապես ՀՀ-ում կոոպերատիվները, ըստ գործունեության, բազմաբնույթ և բազմագործառույթ են:

Անկախ կոոպերատիվների բնույթից՝ բոլորն ունեն նմանատիպ բնութագրեր.

- անդամները միավորվել են առնվազն մեկ ընդհանուր շահի շուրջ
- անդամները նպատակաուղղված են համատեղ գործունեության արդյունքում բարելավելու իրենց տնտեսական և սոցիալական իրավիճակը
- անդամները օգտագործում են համատեղ սեփականություն հանդիսացող գույքը, սարքավորումները և այլն: Անկախ այդ գույքի ու սարքավորումների ֆիզիկական ծավալներից և գործառույթներից, հիմնական նպատակն է՝ օգտագործելով անդամների միասնական ռեսուրսները, ապահովել լավագույն ապրանքներ կամ ծառայություններ հենց առաջնահերթ կոոպերատիվի անդամների համար:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ***Ներդրանքների մատակարարում անդամների համար.*** սերմերի, պարարտանյութերի, բուժանյութերի, մեքենասարքավորումների, անասնաբուժական դեղորայքի և սերմնահեղուկի, ֆերմերային պարագաների ձեռք բերում և այլն:
2. ***Գյուղմթերքի հավաքում, պահպանում և վերամշակում.*** պահեստավորում սառնարանային տնտեսություններում, սորտավորում, տեսակավորում, չորացում, պահածոների, հյութերի պատրաստում, պանրի, այլ կաթնամթերքի արտադրություն և այլն:
3. ***Արտադրված գյուղմթերքի շուկայահանում:***
4. ***Ֆինանսական ծառայության մատուցում.*** փոխառու միջոցների տրամադրում, լիզինգային ծառայությունների մատուցում:
5. ***Արտադրական սպասարկման ծառայությունների մատուցում.*** Գյուղմեքենայացման, հացահատիկի զտման ծառայություններ և այլն:

ԻՆՉՈՒ՞ ՀԻՄՆԵԼ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ

Կոոպերատիվների ստեղծման համար անհրաժեշտ են հետևյալ հիմնական պայմանները.

- Առկա խնդիրները և սահմանափակումները չեն կարող լուծվել անհատապես, միայնակ:
- Ֆերմերների շահերի ներկայացման և պաշտպանության համար չի բավականացնում անհատական մոտեցումը: Կոոպերատիվի տանիքի տակ ֆերմերները կարող են բանակցել տարատեսակ մարմինների հետ և ներկայացնել իրենց շահերը:
- Կոոպերատիվն այլընտրանք չունի, այսինքն՝ անդամները չեն կարող ակնկալել օգնություն, օժանդակություն ընտանիքից, սոցիալական հաստատություններից կամ կառավարությունից:
- Անդամության առավելությունները (ապրանքների, ներդրանքի, վարկերի, ծառայությունների, շուկաների հասանելիությունը) ավելի ծանրակշիռ են, քան անդամությամբ պայմանավորված պարտականությունները (օրինակ՝ ռեսուրսների տրամադրում, ինչպիսիք են՝ փող, ժամանակ, հող, սարքավորում և այլն):
- Խմբից առնվազն մեկ անձ պետք է ունենա առաջնորդի ունակություններ և նախաձեռնի խմբի շահերի ներկայացումը: Այդ անձը պետք է լինի վստահելի, հուսալի և խարիզմատիկ, որը պարտադիր և կարևոր նախապայման է հաջողված աշխատանք իրականացնելու համար:
- Օրենսդրական կամ քաղաքական սահմանափակումները չպետք է խոչընդոտեն խմբին՝ իրենց առաջնորդներին ընտրելու, ապրանքների շուկաներ գտնելու, եկամուտներ ստանալու և որոշումներ կայացնելու հարցում:

ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

- Կոոպերատիվը պետք է ***տեսանելի և շոշափելի*** (տնտեսական և սոցիալական) օգուտներ ապահովի իր անդամների համար, որոնք ավելի գերակշռող են, քան ծախսերը:

- Կոոպերատիվը պետք է ունենա ***շահագրգիռ, փորձառու և դինամիկ մտածելակերպով և գործելակերպով*** վարչություն, որն ի վիճակի է պլանավորել և իրականացնել բիզնես: Վարչությունը պետք է ի վիճակի լինի տրամադրել անդամների համար անհրաժեշտ ծառայություններ և ապրանքներ՝ հաշվի առնելով անդամների կարիքները և հավասարակշռելով կոոպերատիվի բիզնես նպատակների հետ:

- Կազմակերպության կառուցվածքը և կառավարումը պետք է համապատասխանի իր անդամների հնարավորություններին և ունակություններին: Եթե ***անդամի կարողությունները և շահագրգռվածությունը ցածր է***, ապա բարդ և բազմաբնույթ գործունեությամբ զբաղվող կոոպերատիվի խթանման աշխատանքները հաջողության չեն կարող հասնել:

- ***Անդամները պետք է մասնակից լինեն կոոպերատիվի գործունեությանը և՛ որպես օգտվողներ, և՛ որպես սեփականատերեր***: Կոոպերատիվները մասնակցային ձևով կառավարվող կազմակերպություններ են, և անդամները հանդիսանում են համասեփականատերեր: Այսպիսով՝ անդամներն ունեն ինչպես իրավունքներ, այնպես էլ պարտականություններ՝ մասնակցելու իրենց իսկ կոոպերատիվի համար որոշումների ընդունման, վերահսկման կամ գնահատման գործընթացներին: Կոոպերատիվների ձախողման կամ չկայացման հիմնական պատճառը անդամների ցածր մասնակցությունն է: ***Չափազանց կարևոր է, որպեսզի անդամները ֆինանսական ռեսուրսներ ներդնեն կոոպերատիվում:*** Անդամները պետք է մասնակցություն ցուցաբերեն առնվազն երեք մակարդակներում.

1. Մասնակցելով ***ռեսուրսներով***՝ միջոցներ, դրամ, աշխատուժ, ապրանքների առաքում և այլն (ներդրման մասնակցություն).

2. Մասնակցություն ***որոշումներ ընդունելու գործընթացներում***, ինչպես ընդհանուր ժողովի, այնպես էլ տարատեսակ հանդիպումների, աշխատանքային քննարկումների, հանձնաժողովների կամ ղեկավար մարմնի ժողովների ընթացքում.

3. Մասնակցություն ***ինչպես օգուտների, այնպես էլ ռիսկերի բաշխմանը*** (արդյունքի կառավարման մասնակցություն):

Վերջին կետի հետ կապված անհրաժեշտ է ներկայացնել հիմնավորում. խոշոր ֆերմերները երբեմն կարծում են, թե իրենք ավելի ծանրակշիռ ձայնի իրավունք պետք է ունենան կոոպերատիվում, քանի որ անդամակցության հետ կապված իրենց ռիսկերն ավելի շատ են: Միևնույն ժամանակ փոքր ֆերմերները խուսափում են կոոպերատիվում մեծ ֆերմերներին համարժեք ներդրումներ կատարելուց: Այս բոլոր հարցերին պատասխանում ենք հետևյալ օրինակով, որը հստակ ընդգծում է, որ կոոպերատիվի գործունեության ինչպես օգուտները, այնպես էլ ռիսկերն ու վնասները բաշխվում են համամասնորեն՝ կախված անդամի մասնակցությունից:

ԵԿԱՄՈՒՏ

Կոոպերատիվն այս գործարքից ստանում է 88000 դրամ, որից 77000 ծախսերն են, մնացորդ 11000-ը գնում է պահուստային ֆոնդ և օգտագործվում կոոպերատիվի զարգացման համար

1 հա

Փաստացի այս ֆերմերից պահուստային ֆոնդ է գնում **1000 դրամ**

Այս ֆերմերը խնայում է 2000 դրամ

Վնասի պարագայում այս ֆերմերից պահուստային ֆոնդը **ՉԻ** ստանա **1000** դրամ

10 հա

Փաստացի այս ֆերմերից պահուստային ֆոնդ է գնում **10000 դրամ**

Այս ֆերմերը խնայում է 20000 դրամ

Վնասի պարագայում այս ֆերմերից պահուստային ֆոնդը **ՉԻ** ստանա **10000** դրամ

ՎՆԱՍ

Եթե աշխատանքից հետո խափանվել է խոտհնձիչը, 11000-ը օգտագործվում է վերանորոգման համար և չի կարող մուտք լինել պահուստային ֆոնդ

Խոտհնձի ծառայության գինը անդամների համար 8000 դրամ է, ոչ անդամների՝ 10000 դրամ



Նկարագրված դեպքում հստակ երևում է, որ խոտհունձի ծառայություններից օգտվելիս և՝ 1 հա տարածք ունեցող անդամը, և՝ 10 հա ունեցողը խնայում են: Բացի այդ, կոոպերատիվի պահուստային ֆոնդը ծառայությունների մատուցմանը համալրվում է համամասնորեն. ծառայությունից քիչ օգտվողից ավելի քիչ գումար է հատկացվում ֆոնդին, քան շատ օգտվողից: Նույնը նաև գործում է պահուստային ֆոնդի օգտագործման պարագայում: Այս դեպքում իրենք նույնպես համամասնորեն մասնակցում են ռիսկի նվազեցմանը: Սա լավագույնս պատասխանում է այն հարցին, որ անդամները, անկախ տնտեսության մեծությունից, ունեն մեկ ձայնի հավասար իրավունք, սակայն տնտեսական առումով նրանք կարող են տարբեր օգուտներ ունենալ՝ կախված մասնակցության չափից և կոոպերատիվի ծառայություններից օգտվելուց:

Այս ամենին զուգահեռ կոոպերատիվները, ինչպես այլ բիզնես կառույցներ, չպետք է լինեն քարացած, կարծրացած կառույցներ, դրանք պետք է ունենան ճկունություն և հարմարվեն փոփոխվող տարատեսակ իրավիճակներին: Աշխարհում փոփոխությունների այս ժամանակաշրջանում կոոպերատիվները կանգնած են նոր տնտեսական և քաղաքական միջավայրի, անդամների պահանջների և նոր շուկաների պայմաններին հարմարվելու մարտահրավերների առջև: Կարևոր է գիտակցել, որ պետք է կիրառել նոր տեխնոլոգիաներ, սովորել բիզնեսի վարման արդիական մեթոդներ, շուկայում ներկայանալ նոր ապրանքով, գրավել նոր շուկաներ:

ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՇՈՇԱՓԵԼԻ ՈՒ ՏԵՍԱՆԵԼԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՕԳՈՒՏՆԵՐԸ

Կոոպերատիվի գործունեությունը կարող է ընդգրկել լայն շրջանակ, որը համագործակցության միջոցով տնտեսական օգուտներ կստեղծի անդամների համար: Այդ օգուտները կարող են ձևավորվել հետևյալ կերպ.

- ***Կիրառել տնտեսական մասշտաբի էֆեկտ*** (օրինակ՝ գնել մեծ ծավալի նույն ապրանքից և ունենալ ավելի ցածր գին: Այսպես, կոոպերատիվը կարող է բանակցել և մեծածախ լավագույն գնով գնել ներդրանք և տրամադրել անդամներին):

- Ունենալ ավելի ***որակյալ ներդրանք***: Կոոպերատիվի կողմից բանակցությունների վարման պրոֆեսիոնալիզմը կարող է լուրջ դեր խաղալ այս հարցում:

- ***Կրճատել գործարքների ծախսերը***, օրինակ՝ ինֆորմացիայի, գործողությունների իրականացման, վերահսկման, նաև ծառայությունների և ապրանքների փոխանակման պարագաներում:

- ***Կրճատել ռիսկերը***՝ չնախատեսված գների կամ անհրաժեշտ պահին տվյալ ներդրանքի հասանելիության տեսանկյունից:

- ***Խուսափելով կապակցված շուկաներից***, օրինակ՝ երբ ներդրանքի ձեռքբերումը կամ արտադրանքի իրացումը կապված է վարկի տրամադրման հետ:

- ***Առաջարկել նոր ծառայություններ***, այլ արտաքին ռեսուրսների հասանելիություն, ծառայություններ, որոնք այլ պարագայում հասանելի լինել չէին կարող (բիոգազի միջոցով ջերմոցների և չորանոցների գործարկում, արոտավայրերում արդյունավետ կթի կազմակերպում և այլն):

- Շարունակաբար ապահովելով ապրանքի ***հավելյալ արժեք*** ստեղծող գործողությունները (օրինակ՝ հաճարի ձավարաղացի կիրառում, ցորենի ալրաղացի միջոցով ալյուրի ստացում, կտավատի ձեթի արտադրություն, կաթնամթերքի արտադրություն և այլն):

Կոոպերատիվների գործունեության ընթացքում, անշուշտ, լինում են դեպքեր, երբ տարբեր հանգամանքների բերումով (օրինակ՝ անհրաժեշտ ծավալների ապահովման համար) կոոպերատիվը գործ է ունենալու անդամի չհանդիսացող անձանց հետ: Սակայն կոոպերատիվը պետք է միանշանակ գիտակցի, որ առաջնահերթությունը տրվում է անդամներին, որքան էլ ֆինանսապես հրապուրիչ լինի ոչ անդամների հետ գործակցությունը:

Օրինակ՝ կաթի հավաքման կոոպերատիվներում որքան մթերվող կաթի քանակը շատ լինի, այնքան ցածր կլինեն պաղեցման ագրեգատում դրա պահպանման և այլ գործառնական ծախսերը: Բացի այդ՝ մեծ քանակի կաթ ունենալով՝ հնարավոր է ավելի լավ բանակցել վերամշակողների հետ: Այս տեսանկյունից կոոպերատիվի անդամներից մթերվող կաթի քանակը կարող է չբավականացնել և կոոպերատիվը պետք է նաև գործարքի մեջ մտնի ոչ անդամ ֆերմերների հետ:

Անկախ այն բանից, թե ինչ ծառայություն է մատուցում կոոպերատիվը՝ կաթի գնում, գյուղատնտեսական մեքենայացման ծառայություններ, հացահատիկի զտում, քամհարում, ձավարաղացի գործարկում, մթերքի չորացում, փաթեթավորում, կտավատի ձեթի ստացում և այլն, նա պետք է ***հստակ տարանջատի գնային քաղաքականությունը անդամների և ոչ անդամների համար***:

Անհատ ֆերմերի՝ կոոպերատիվին անդամակցելու հիմնական շարժառիթը ***սեփական տնտեսության եկամուտների ավելացումն է***:

Կոոպերատիվին անդամակցելու ֆերմերների տնտեսական հիմնավորումները ներկայացված են ստորև:

Ի՞նչ է անհրաժեշտ ֆերմերին	Ինչպե՞ս դա կարող է լուծվել կոոպերատիվի միջոցով
Ներդրանքի / ծառայությունների հասանելիություն	Տնտեսությունից ոչ հեռու ներդրանքի / ծառայությունների առկայության ապահովում
Ներդրանքի ցածր գներ	Սակարկություն
Ծառայությունների ցածր գներ	Սեփական միջոցներով ծառայությունների մատուցում
Ավելի բարձրորակ ներդրանքներ	Որակի վերահսկողություն
	Ներդրանքի սեփական արտադրություն
Գյուղմթերքի բարձր գին	Սակարկություն (խմբի անունից)
Ավելի թափանցիկ շուկաներ	Շուկայական տեղեկատվության հավաքում և բաշխում
	Շուկայի կազմակերպում (օր.՝ ֆերմերային շուկա, ճանապարհային շուկա և աճուրդ)
Շուկաների մատչելիություն	Գնորդների հետ երկարաժամկետ հարաբերությունների ստեղծում
Տեխնիկական աջակցության մատչելիություն	Ապահովել անմիջական կամ միջնորդավորված տեխնիկական աջակցություն
Կրթության և վերապատրաստման մատչելիություն	Անդամներին տրամադրել կրթություն, վերապատրաստում և տեղեկատվություն
Վարկերի մատչելիություն	Ուղղակիորեն տրամադրել վարկեր կամ միջնորդել այլ աղբյուրներից վարկեր ստանալու համար
Հավելյալ արժեք ապահովել գյուղմթերքի համար	Գյուղմթերքի համատեղ տեսակավորում, դասակարգում, պահեստավորում և փաթեթավորում
	Գյուղմթերքի համատեղ վերամշակում
Շուկայական ռիսկերի կրճատում	Անդամների արտադրած գյուղմթերքի համատեղ վաճառքի իրականացում
Արտադրական ռիսկերի կրճատում	Ուղղակիորեն ապահովագրության տրամադրում կամ միջնորդում այլ կազմակերպություններից այն ստանալուն

ՖԵՐՄԵՐՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՕԳՈՒՏՆԵՐԸ

Քննարկենք մի քանի օրինակներ, որոնք հստակ պատկերացում կտան, թե փոխգործակցությունը ինչպիսի առավելություններ կարող է տալ ֆերմերներին:

Ֆերմերը մշակում է հացահատիկ: Բնական է՝ նրան անհրաժեշտ է հետևյալ ներդրանքը սերմեր, պարարտանյութեր, բուժանյութեր, դիզելային վառելիք, սարքավորումներ նաև գյուղատնտեսական մեքենաների միջոցով իրականացվող ծառայություններ: Այս ամենի համար նրան հարկավոր են նաև ֆինանսական միջոցներ: Հետբերքահավաքային փուլում նրան անհրաժեշտ են ծառայություններ՝ զտում, պարկավորում, շուկայահանում:

Կոոպերատիվի տանիքի տակ միավորվելով համասեռ արտադրանք և խնդիրներ ունեցող ֆերմերների հետ՝ նա սահմանում է իր առաջնահերթությունները և կարիքները: Ստորև աղյուսակը ներկայացնում է 1 հա հաճարի մշակության և ձավարի արտադրության ծախսերը, ինչպես նաև վաճառքից հասույթները:

1 հա հաճարի մշակության և վերամշակման ծախսերը և եկամուտները	Շուկայական գին	Կոոպերատիվի անդամների համար մատուցվող գին
1 հա հաճարի մշակության ծախսեր		
Սերմ*	30,000	30,000
Վար	30,000	28,000
Ցանք	10,500	9,500
Կուլտիվացիա	21,250	20,250
Պարարտանյութ	24,000	24,000
Պարարտանյութի ցրում	5,250	4,750
Բուժանյութերի կիրառում	-	-
Բերքահավաք	21,000	19,000
Տեղափոխում	5,000	5,000
Մինչ վերամշակելը ծախսերը	**147,000**	**140,500**
Վերամշակման ծախսեր		
Ավանդական մշակության պարագայում ստացվում է 1,6 տոննա հաճար 1 հա-ից		
Քամհարում (մեկ տոննայի արժեքը 3000 դրամ, քամհարում են ամբողջ 1,6 տոննա բերքը)	4,800	4,800
Զտում (1.6 տոննայից 300 կգ զտում են, որպես **սերմացու**, որ ստացվի 200 կգ սերմ: 1 տոննայի զտման արժեքը 4000 դրամ է)	1,200	900
Սերմի ախտահանում (1 կգ-ը 10 դրամ)	2,000	2,000
Հատիկի զտում և ջարդում (1 կգ-ը 30 դրամ: Քամհարելուց, զտելուց հետո 60% մաքուր հատիկ է դուրս գալիս)	39,000	32,500
Վերամշակելուց հետո ծախսեր	**47,000**	**40,200**
Ընդհանուր ծախսեր	**194,000**	**180,700**
Իրացումից հասույթ		
Աղացած հատիկի գինը միջինը 350 դրամ		
Ձավարի վաճառքից եկամուտ	273,000	273,000
Մնացորդը որպես անասնակեր (հատիկ, թեփով 1300կգ-ից 780 կգ մաքուր հատիկ, մնացածը 520 կգ օգտագործվում է որպես անասնակեր)	36,400	36,400
Ընդամենը հասույթ	**309,400**	**309,400**
Զուտ շահույթ	**145,400**	**158,700**
Խնայողություն կոոպերատիվի անդամների համար		13,300

*Սերմը համատեղ ձեռք բերելիս միանշանակ գինը և որակը ավելի նպաստավոր կլինեն անդամների համար
**Կանաչ գույնով նշված են այն խնայողությունները, որոնք անդամները ունենում են կոոպերատիվի ծառայություններից օգտվելիս:

Փաստացի 1 հա հաճարի դեպքում կոոպերատիվի անդամները սերմից մինչև աղացած հաճարի (ձավարի) վաճառք իրականացնելու շղթայում խնայում են 13,300 դրամ, եթե կոոպերատիվը ունի գութան, կուլտիվատոր, շարքացան, պարարտանյութ ցրող, բերքահավաք իրականացնող տեխնիկա, և զտման և հատիկ ջարդող սարքավորումներ: Բերքի 1.6 տոննա ստացվում է ավանդական՝ միայն ազոտական պարարտանյութ կիրառելիս, բայց եթե կիրառվում են կալիումական և ֆոսֆորական պարարտանյութեր, ապա ֆերմերները կստանան ավելի բարձր բերքատվություն՝ մոտավոր՝ 2.5 տոննա հեկտարից:

ՀԱՎԵՅԱԼ ԱՐԺԵՔԻ ՍՏԵՂԾՈՒՄ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻ ՄԻՋՈՑՈՎ

Կոոպերատիվը, ի թիվս առաջնային գյուղատնտեսական արտադրանքին նպաստող ապրանք և ծառայություններ մատուցելուն, կարող է նպաստել նաև այդ արտադրանքի՝ արժեշղթայում հավելյալ արժեք ստեղծելու գործընթացին:

Քննարկենք հաճարից ձավարի վերամշակման օրինակը: Անհատ ֆերմերները չեն կարող հիմնել և շահագործել հաճարի վերամշակման արտադրամաս, սակայն միավորվելով կոոպերատիվի շուրջ՝ դա լիովին հնարավոր է: Սա հավելյալ արժեք ստեղծող գործողություն է, որը կավելացնի կոոպերատիվի անդամների եկամուտները: Եթե չվերամշակված հաճարի գինը 100-120 դրամ է, ապա վերամշակելուց հետո այն վաճառվում է առնվազն 350 դրամով: Կոոպերատիվի անդամների եկամուտների ավելացմանը զուգահեռ արտադրամասը համայնքում ստեղծում է աշխատատեղեր: Ստորև աղյուսակը ներկայացնում է ձավարի արտադրության թվային տվյալները:

ՀԱՃԱՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄԻՑ ՀԱՍՈՒՅԹ

Վերամշակված քանակ (անդամ/ոչ անդամ)	1 կգ հաճարի վերամշակման գինը (ՀՀ դրամ)	Հասույթ ծառայությունների մատուցումից (ՀՀ դրամ)
Կոոպերատիվի անդամ 90000 կգ	25	2 250 000
Կոոպերատիվի ոչ անդամների 210000 կգ	30	6 300 000
Ընդամենը հասույթ		**8 550 000**

1 ԿԳ ՀԱՃԱՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԻՆՔՆԱՐԺԵՔ

Աշխատավարձ* (ՀՀ դրամ)	Էլեկտրականության ծախս (ՀՀ դրամ)	Սպասարկման ծախս (ՀՀ դրամ)	Ինքնարժեք (1 կգ վերամշակելիս) (ՀՀ դրամ)
8,8	15	0,7	24,5

*Ուղղակի աշխատավարձ՝ հացահատիկի վերամշակման 1 աշխատակից, վերամշակման 4 բանվորներ

ԶԱՎԱՐԱՂԱՑԻ ՇԱՀՈՒՅԹԻ ՀԱՇՎԱՐԿ

Հասույթ	8 550 000
Ուղղակի ծախսեր (ինքնարժեք * քանակ)	7 350 000
Շահույթ	1 200 000

Հաշվարկները ցույց են տալիս, որ կոոպերատիվը կկարողանա հաճարի վերամշակումից ստանալ 1.2 մլն ՀՀ դրամ շահույթ: Վարչական ծախսերը փակելուց հետո զուտ շահութը կհարկվի համաձայն ՀՀ օրենսդրության: Կոոպերատիվի ընդհանուր ժողովի որոշմամբ ձևավորված շահույթը կարող է ուղղվել կոոպերատիվի պահուստային ֆոնդ, որը կծառայի կոոպերատիվի կանոնադրական նպատակներին:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱՔԻՆ ՕԺԱՆԴԱԿՈՂ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԴԵՐԸ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Կոոպերացիայի զարգացման գործում կառավարության հիմնական գործառույթը նպաստող օրենսդրական դաշտի ստեղծումն է, որը պետք է հզորացնի կոոպերատիվների ինքնավարությունը, ինքնաֆինանսավորումը, ինքնաբավությունը, այլ ոչ թե խոչընդոտի: Այսինքն՝ նույնիսկ եթե պետությունը տրամադրի գյուղատնտեսական տեխնիկա, կոոպերատիվները պետք է կարողանան ինքնուրույն ընտրել իրենց առաջնորդներին, իրացնել իրենց արտադրանքը, եկամուտներ ստանալ և ինքնուրույն որոշումներ կայացնել ստացված եկամուտների տնօրինման հարցերում: Կառավարությունը, ինչպես նաև տեղական իշխանությունները, չպետք է միջամտեն կոոպերատիվի ներքին գործընթացներին: Կոոպերատիվը չի կարող գործել, որպես կառավարության գործակալություն կամ իրականացնել այդ գործակալությանը բնորոշ որևէ գործառույթ: ***Կոոպերատիվների քաղաքականացումը վերջիններիս անխուսափելի ձախողումն ու կործանումն է***: Կան բազմաթիվ օրինակներ, երբ ՀՀ-ում գործող կոոպերատիվը, սերտաճած լինելով համայնքապետարանին, համայնքապետի փոփոխությունից հետո ուղղակի դադարում է գործունեություն ծավալելը, ինչը հստակ ցույց է տալիս, որ այդ կոոպերատիվը կախված է եղել համայնքապետարանից և չի գործել ի շահ իր անդամների:

Ինչպես կառավարության, այնպես էլ միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների կողմից մշտապես փորձեր են իրականացվում խթանելու կոոպերատիվներին: Այս գործընթացը այնուամենայնիվ ավելի արդյունավետ է, երբ ակտիվությունն ու նախաձեռնությունը գալիս է կոոպերատիվի կողմից: Անդամները պետք է քաջ գիտակցեն կամավոր միավորման և գործակցության առավելությունները: Պետական և այլ օժանդակող կառույցները չպետք միջամտեն կոոպերատիվի ինքնավարությանը և որոշումների կայացման գործընթացներին:

ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՓՈՐՁԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒՄԸ

Կոոպերատիվները շատ երկրներում տնտեսության մեջ ունեն ծանրակշիռ ներկայություն: Այդպիսի երկրների շարքում են Ֆինլանդիան, Քենիան, Էստոնիան, Ճապոնիան, ԱՄՆ-ն, Լատինական Ամերիկայի մի շարք երկրներ և այլն:

Ստորև ներկայացված են մի շարք ծանոթ ապրանքանիշներ, որոնց սեփականատերերը կոոպերատիվներն են:

· 100 տարուց ավելի է Վալիո (Valio) ապրանքանիշով կաթնամթերքի արտադրողները և սեփականատերերը ֆերմերներն են: Սա Ֆինլանդիայում առաջատար 18 կոոպերատիվների միավորում է, որն իր արտադրանքը վաճառում է ամբողջ աշխարհով:

· Արլա (Arla) ապրանքանիշով կաթնամթերքի սեփականատերեր են Եվրոպական 7 երկրների 12700 ֆերմերները: Այն հիմնվել է Դանիայում և Շվեդիայում 1888 թվականին և մինչև օրս պատկանում է ֆերմերներին:

· Կրեդիտ Ագրիկոլ Գրուպ (CRÉDIT AGRICOLE GROUP) Ֆրանսիայում կոոպերատիվների կողմից հիմնված ֆինանսական կառույց է, որը ունի 9 միլիոն անդամ:

· Ռոյալ Ֆլորա Հոլլանդ (Royal FloraHolland) ծաղիկների տարբեր տեսակների աճեցնող և վաճառք իրականացնող 100 ամյա կոոպերատիվ է, որը Նիդերլանդներից աուկցիոնների միջոցով վաճառում է ծաղիկներ աշխարհի տարբեր ծայրերում:

Աշխարհում դրական օրինակները բազմաթիվ են, դրանք ռեալ են և աշխատող: Կոոպերացիան լավագույն լուծումն է հատկապես գյուղատնտեսության ոլորտում, որը ապացուցվել է աշխարհի գրեթե բոլոր երկրներում:

ՀՀ-ում սպառողական կոոպերատիվների քանակը մոտենում է 400-ի, որոնց մեծամասնությունը ունի կառավարման խնդիրներ: Դրանց կառավարման մեթոդները կոոպերատիվի արժեքների և սկզբունքների հետ ոչ մի առնչություն չունեն: Կան կոոպերատիվներ, որոնք գործում են և ունեն հայտնի արտադրանք և իրականացնում են գործունեություն, որը լուրջ դրական ազդեցություն է թողնում անդամների վրա:

Կոոպերատիվների հետաքրքիր օրինակներ են.

• Ֆարմ Կրեդիտ Արմենիա ունիվերսալ վարկային կազմակերպություն առևտրային կոոպերատիվը – իր անդամ փայատերերին տրամադրում է տարատեսակ վարկեր, լիզինգ, այն հիմնադրվել է 2005 թվականին:

• «Լուկաշին գյուղատնտեսական ասոցիացիա» սպառողական կոոպերատիվը զբաղվում է թարմ և չորացված մրգի և բանջարեղենի, գինու, մեղրի, արտադրությամբ և իրացմամբ: Այս կոոպերատիվը ստեղծել է փաթեթավորման արտադրամաս՝ չորացված մթերքի, ինչպես նաև մեղրի և գինու համար: Լինելով նոր ապրանքանիշներ, դրանք իրացվում են ՀՀ-ում:

• «Մարտունու արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվ – գյուղատնտեսական տեխնիկայի սպասարկման ծառայությունների մատուցում:

ՏԵՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԻ ՀԱՋՈՂՎԱԾ ՓՈՐՁԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

“Լուկաշին գյուղատնտեսական ասոցիացիա” սպառողական կոոպերատիվ

Կոոպերատիվը գտնվում է Արմավիրի մարզի Լուկաշին համայնքում, հիմնվել է 2005 թվականին, սկզբնական շրջանում ունեցել է 42 անդամ, այժմ անդամների թիվը 134 է՝ մոտակա երեք գյուղերի շնորհիվ: Կոոպերատիվը համարվում է հաջողակ, քանի որ տարիների ընթացքում տարատեսակ բիզնես գործունեություններով հաջողվել է բարձրացնել անդամների եկամուտները, ինչպես նաև իրականացնել մի շարք սոցիալական ծրագրեր: Հարկ ենք համարում նշել, որ կոոպերատիվը անկախ է համայնքապետարանից և այլ տեղական կառավարման մարմիններից:

Կոոպերատիվի անդամները օգտվում են կոոպերատիվի հետևյալ ծառայություններից.

- Մրգի և բանջարեղենի սառնարանային պահպանում
- Մրգի և բանջարեղենի չորացում
- Գյուղատնտեսական մեքենայացման ծառայություններ
- Կաթի հավաքում, պահպանում և վաճառք
- Ուսուցումներ և խորհրդատվություններ:

Կոոպերատիվը ունի նաև օրգանական սերտիֆիկացում չորացված մրգերի համար. հատկապես վաճառում է օրգանական սև սալորաչիր:

Սառնարանային պահպանումը իրականացնում են ըստ սեզոնային մրգերի և բանջարեղենի՝ ծիրան, սալոր, կաղամբ, դդում: Կոոպերատիվի գործունեության ընթացքում գոյացած գումարների մի մասը ներդրվում է նոր սարքավորումներ, նոր արտադրական տարածքներ ունենալու, ինչպես նաև համայնքում սոցիալական ենթակառուցվածքների վերանորոգումը համաֆինանսավորելու համար: Այդպես են համաֆինանսավորմամբ վերակառուցվել համայնքային բուժկետը, մանկապարտեզը:

«ՌՈԶԱ-1» ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ

Կոոպերատիվը, որ հիմվել է 2016թ. գտնվում է Գեղարքունիքի մարզի Վարդենիսի տարածաշրջանի Խաչաղբյուր համայնքում: Նոր է, սակայն անդամները ունեն կոոպերատիվում աշխատելու տարիների փորձ: Կոոպերատիվը զբաղվում է կաթի մթերմամբ և վերամշակմամբ, արտադրված պանրի տարբեր տեսակների վաճառքով: Կոոպերատիվը ունի ժամանակակից արտադրամաս, որը օրական վերամշակում է 1200-1500 կգ կաթ: Արտադրում է ինչպես ավանդական Լոռի և Չանախ տեսակի պանիրներ, այնպես էլ եվրոպական բարձրարժեք Գաուդա տեսակի պանիր: Կոոպերատիվը նոր է հիմնված, սակայն արդեն իսկ արտադրում է փաթեթավորված, պիտակավորված արտադրանք Երևան քաղաքի մի շարք խանութներում և սուպերմարկետներում: Կոոպերատիվի անդամները կոոպերատիվի հիմնական աշխատակիցներն են:

«ՄԱՐՏՈՒՆՈՒ ԱՐՈՏՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ» ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ

Գեղարքունիքի մարզի Ճամբարակի տարածաշրջանի Մարտունի համայնքում 2015 թվականին հիմնված կոոպերատիվը ունի 40 անդամ, որոնք ի տարբերություն այլ կոոպերատիվների, փոխել են ցածր փայաբաժին վճարելու կարծրատիպը: Կոոպերատիվի անդամները ներդրել են 10000 դրամ և այդ փայատիրական կապիտալով և տարբեր դոնորների օժանդակությամբ համաֆինանսավորում են իրականացրել և ՀՀ ԳԾԻԳ-ից ստացել գյուղատնտեսական տեխնիկա և սարքավորումներ: Կոոպերատիվի տեսլականն է անդամների համար խնայողությունների ստեղծումը և եկամուտների ավելացումը՝ պահպանելով կոոպերատիվի արժեքները, սկզբունքները և արդարությունը: Կոոպերատիվը այն եզակիներից է եղել, որ, ունենալով երկու տրակտորներ, դրանց շահագործման համար հայտարարություն է փակցրել ամբողջ համայնքով և 4 դիմումատուներից 2-ին ընտրել փակ գաղտնի քվեարկությամբ: Կոոպերատիվը 2016 թվականին 20 օրում իրականացրել է մոտ 120 հա տարածքի խոտհունձ, խոտհավաք և մոտ 22000 հակավորում: Ստեղծված գումարը կրկին օգտագործել է այլ տեխնիկայի համաֆինանսավորման համար: Կոոպերատիվը անկախ է համայնքապետարանից, համագործակցում է, սակայն որոշումները ընդունում է իր կառավարման մարմիններում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք
2. ՀՀ օրենքը սպառողական կոոպերացիայի մասին
3. ՀՀ օրենքը գյուղատնտեսական կոոպերատիվների մասին
4. Վարդան Ուռուտյան, Սամվել Ավետիսյան, Գյուղատնտեսական կոոպերատիվներ, 2011
5. Վարդան Ուռուտյան Գյուղատնտեսական կոոպերատիվներ, միասին աշխատելու օգուտն ու հմայքը, 2015
6. Անտոնիո Ֆիչի, Վարդան Ուռուտյան, Մեկնաբանություններ Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական կոոպերատիվների օրենսդրական ներկա վիճակի և բարելավման հեռանկարների վերաբերյալ http://icare.am/icare/publications
7. FAO 1998. Agricultural Cooperative Development – A manual for trainers
8. IFAD, WFP, FAO 2012. Agricultural cooperatives: paving the way for food security and rural development
9. Training manuals: Cooperatives http://www.nda.agric.za/docs/GenPub/